Արձանագրություն N 4
«ՏԿՏՏՆ-ԳՀԱՇՁԲ-2019/9Ն» ծածկագրով գնանշման հարցում ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

«05» ապրիլի 2019թ.
ժամը՝ 12:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Կ. Գասպարյանը
Հանձնաժողովի անդամներ՝ Ն. Մեսրոպյանը, Ա. Պապյանը, Լ. Հարությունյանը, Լ. Ոսկանյանը
Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Պետրոսյանը

1. Գնանշման հարցում ընթացակարգի ստացված փաստաթղթերի մասին
(Կ. Գասպարյան)

Ընդունել ի գիտություն, որ.

1. ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացվել է հարցման եզրակացությունը, համաձայն որի՝ <<Հալդի Քոնսալթ>> ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների մասով չունի ժամկետանց հարկային պարտավորություններ, ինչպես նաև վերջինիս կողմից ներկայացված հայտը բավարարում է <<ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշին:

2. <<Հալդի Քոնսալթ>> ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել են որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը՝ նախկինում կատարած պայմանագրի (պայմանագրերի), դրա հաշիվ ապրանքագրերի, պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող հանձման-ընդունման արձանագրությունների պատճենները, սակայն չի ներկայացվել թիվ 5 հավելվածը /առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից հրավերով պահանջվող փաստաթղթերի ներկայացման դիմումը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ 0:

2. Արձանագրված անհամապատասխանությունները շտկելու պահանջի մասին
(Կ. Գասպարյան)

Հանձնաժողովը որոշեց.

1. Հիմք ընդունելով հրավերի 7.20 կետը ծանուցել մասնակցին և առաջարկել մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունը:

2. Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ոչ ուշ, քան փաստաթղթերը հանձնաժողովի անդամներին տրամադրվելուն հաջորդող աշխատանքային օրվա ժամը 12:00-ին, ՀՀ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3/3, ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն, 2-րդ հարկ, N 208 սենյակ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ _____ Կ. Գասպարյան

Անդամներ՝ _____ Ա. Պապյան

_____ Ն. Մեսրոպյան

_____ Լ. Հարությունյան

_____ Լ. Ոսկանյան

Քարտուղար՝ _____ Ա. Պետրոսյան

Scanned by CamScanner